

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի մայիսի 25-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտի 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3-րդ նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 11-ը:

Նիստը, Խորհրդի նախագահի համաձայնությամբ, վարում էր Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը:

Նիստի օրակարգի 1-ին կետի համաձայն և ի պաշտասխան Խորհրդի անդամ Ռաֆֆի Գյոզալյանի գրավոր հարցմանը (ինչը հիմք էր հանդիսացել սվյալ հարցն օրակարգում ընդգրկելու համար)՝ Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու 2013 թվականի N 46-Ն որոշմամբ հաստատված «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգի» (այսուհետ՝ Կարգ) համապատասխան կետերի վերաբերյալ: Մասնավորապես քննարկվեց 2021 թվականի ապրիլի 30-ի նիստի ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա, մայիսի 20-ին նախատեսված նիստը չկայանալու վերաբերյալ հարցը: Խորհրդի քարտուղարը՝ հղում անելով Կարգի 19-րդ կետին, պարզաբանեց, որ Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ և այս դեպքում Խորհրդի անդամների՝ սահմանված կարգով և ժամկետում նիստի օրակարգի վերաբերյալ չձանուցվելն ենթադրում է, որ նիստը չի կայանալու: Իսկ նախապես համաձայնեցված մայիսի 20-ի Խորհրդի նիստը չկազմակերպելը պայմանավորված է եղել Խորհրդի քարտուղարի աշխատանքային ծանրաբեռնվածությամբ:

Նիստի օրակարգի 2-րդ կետի համաձայն՝ Խորհրդի անդամ՝ «Երիտասարդները հանուն փոփոխության» ՀԿ-ի (այսուհետ՝ ՀԿ) նախագահ, Գրիգոր Զանիկյանը ներկայացրեց ՀԿ-ի և Վալերի Բոյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կողմից 2021 թվականի մայիսի 27-ին կազմակերպվող աշխատանքային էքսպոյի (այսուհետ՝ էքսպո) վերաբերյալ տեղեկատվություն՝ մասնավորապես էքսպոյին նախատեսվող թվով

2000 երիտասարդների, մինչև 40 գործատուների մասնակցության վերաբերյալ, նշելով, որ վերջիններիս թվին են պատկանում այնպիսի խոշոր ընկերություններ, ինչպիսիք են «SOFT CONSTRUCT», «BET CONSTRUCT», «DIGITAIN» և այլն, ինչպես նաև թվով 6 աշխատարանների միաժամանակյա անցկացման վերաբերյալ:

Խորհրդի անդամ Կալիպտո Բզնունին առաջարկեց նմանատիպ միջոցառումներ կազմակերպելիս, նախապես առաջադրել այնպիսի չափանիշներ, որոնց համաձայն կսահմանափակվի գործատու հանդիսացող, վիճակախաղեր և ծխախոտ ներկայացնող և գովազդող ընկերությունների մասնակցությունը և հայտնեց իր բացասական դիրքորոշումը վերը նշված ընկերությունների մասնակցության վերաբերյալ:

Այս առնչությամբ իր դիրքորոշումը հայտնեց նաև Խորհրդի անդամ Տիգրան Ավագյանը և առաջարկեց վերանայել նմանատիպ ընկերությունների կողմից ներկայացվող վիճակախաղերի և ծխախոտի գովազդի գնային քաղաքականությունը, ինչի արդյունքում կնվազեն գովազդի ծավալները, ինչն էլ իր հերթին կնվազեցնի նմանատիպ գովազդների բացասական ազդեցությունը երիտասարդների վրա:

Տվյալ հարցին անդրադարձավ նաև Խորհրդի անդամ Ռաֆֆի Գյոզալյանը, ով նշեց, որ անհրաժեշտ է համարում Խորհրդի անունից հանդես գալ նշված տեսակի գովազդի քանակի սահմանափակման առաջարկությամբ:

Խորհրդի անդամ Գրիգոր Զանիկյանը նաև հայտնեց, որ որպես ՀԿ-ի նախագահ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ համագործակցության ակնկալիքով, խնդրելով վերջինիս աջակցությունը ինֆորմացիայի տարածման, Էքսպոյի լուսաբանման, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանում առկա թափուր հաստիքները ներկայացնող տաղավարի ապահովման համար:

Խորհրդի անդամները հանդես եկան տարաբնույթ հարցադրումներով, որոնք վերաբերում էին միջոցառման վայրի, ժամկետի ընտրությանը և փաստեցին, որ միջոցառումն իր բնույթով և տեխնիկական նկարագրով համընկնում է Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի զարգացման ծրագրով նախատեսվող «Աշխատանք երիտասարդներին» ամենամյա աշխատանքային տոնավաճառի հետ, որի տեխնիկական բնութագիրը քննարկվել էր 2021 թվականի ապրիլի 30-ին կայացած Խորհրդի նիստի շրջանակներում:

Այս առնչությամբ Գրիգոր Զանիկյանը տեղեկացրեց, որ Էքսպոն կրում է ամենամյա բնույթ և նախկինում ևս կազմակերպվել է: Նա քաղաքապետարանին առաջարկեց


միջոցառումների կազմակերպման հարցում լինել ավելի ամբիցիոզ և կազմակերպել առավել մասշտաբային միջոցառումներ: Խորհրդի անդամներից շատերն ևս համամիտ էին տվյալ կարծիքի հետ և փաստեցին, որ ամբողջ տարվա կտրվածքով նմանատիպ միջոցառումներ կազմակերպվում են տարբեր կազմակերպությունների կողմից ևս:

Քաղաքապետարանը ներկայացնող Խորհրդի անդամ Մարիամ Մարտիրոսյանը փաստեց, որ միջոցառման մասշտաբները կախված են երիտասարդության ոլորտին հատկացված խիստ սահմանափակ բյուջեից, իսկ բովանդակության առումով պայմանավորվածություն ձեռք բերվեց 2021 թվականին նախատեսվող միջոցառումների ցանկն ամբողջ ծավալով ներկայացնել Խորհրդի հաջորդ նիստին՝ քննարկման նպատակով:

Նիստի օրակարգի 3-րդ կետի համաձայն՝ քննարկվեց Էքսպոյի շրջանակներում համագործակցության և աջակցության հնարավորությունների վերաբերյալ հարցը: Խորհրդի քարտուղարը ներկայացրեց, որ քաղաքապետարանը բավարարելով Էքսպոյին աջակցելու վերաբերյալ Գրիգոր Զանիկյանի դիմումն, իր պատրաստակամությունն է հայտնել ինֆորմացիայի տարածման և Էքսպոյի լուսաբանման հարցում աջակցել Էքսպոյի կազմակերպիչներին: Միաժամանակ առաջարկեց լուսաբանման ընթացքում Երևանի քաղաքապետարանի հետ միասին հղում անել նաև Խորհրդին: Խորհրդի անդամ Դավիթ Մանուկյանն անընդունելի համարեց այն, որ քաղաքապետարանը պայմանավորվածություն է ձեռք բերել համատեղ միջոցառում անցկացնել կոնկրետ կազմակերպության հետ և անհասկանալի համարեց կոնկրետ կազմակերպության ընտրության սկզբունքը: Վերոնշյալ հարցի քննարկումը տարածայնությունների առիթ հանդիսացավ և որոշվեց հարցը դնել քվեարկության: 10 կողմ ձայնով որոշվեց, որ Խորհուրդը մաս չի կազմելու տվյալ համագործակցությանը:

Նիստի ավարտին քվերկության դրվեց հաջորդ նիստի անցկացման օրը որոշելու հարցը: Խորհրդի անդամների մի մասն առաջարկեց այն անցկացնել 2021 թվականի հունիսի 18-ին, իսկ մյուս մասը՝ հունիսի 25-ին: 8 կողմ, 2 դեմ, 1 ձեռնպահ արդյունքով որոշվեց Խորհրդի հաջորդ նիստը գումարել 2021 թվականի հունիսի 25-ին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ